

## Կ Ա Ր Գ

### **«ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ» ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ 55/26 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ**

#### **1. Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Դ Ր Ո Ւ Յ Թ Ն Ե Ր**

1. Սույն կարգը սահմանում է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մատչելի բնակարան երիտասարդ մասնագետներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի 55/26 հասցեում կառուցվելիք բազմաբնակարան շենքի բնակարանների շահառուների միջև բնակարանների բաշխման (այսուհետ՝ բնակարանների բաշխում) սկզբունքներն ու ընթացակարգը:
2. Բնակարանների բաշխումն իրականացվում է հետևյալ սկզբունքների պահպանմամբ՝
  - հրապարակայնություն և թափանցիկություն,
  - առաջնային արձագանքում ծրագրի հիմնական շահառուների կարիքներին,
  - բաշխման ընթացքում հավասարության սկզբունքի ապահովում,
  - բաշխման ընթացքում սուբյեկտիվ մոտեցումների բացառում,
  - շահառուների մասնակցություն բնակարանների բաշխման գործընթացին:
3. Շահառուների միջև բնակարանների բաշխումն իրականացվում է հրապարակային վիճակահանության միջոցով:

#### **2. Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը**

4. Հրապարակային վիճակահանությամբ որոշվում է յուրաքանչյուր շահառուի բնակարանը (վիճակատոմսերում բնակարանների նկարագրությունը ներառում է բնակարանի մակերեսը, սենյակների թիվը, հարկը, մուտքը և բնակարանի պայմանական համարը):
5. Ըստ բնակարանների սենյակների քանակի և մակերեսային նախընտրությունների շահառուները բաժանվում են համապատասխան խմբերի: Վիճակահանությունն իրականացվում է յուրաքանչյուր խմբում ներառված շահառուների միջև:
6. Առաջարկվող որևէ տեսակի բնակարանների քանակը շահառուների պահանջարկին չբավարարելու դեպքում հնարավորություն է ընձեռվում մասնակցելու այլ մակերեսով բնակարանների վիճակահանությանը:
7. Հրապարակային վիճակահանությանը շահառուն մասնակցում է անձամբ (անձը հաստատող փաստաթղթով), կամ ներկայացուցչի միջոցով (գրավոր լիազորագրի առկայության դեպքում):

### **3. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

8. Հրապարակային վիճակահանության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմակերպում և վերահսկում է վիճակահանության ընթացքը, ապահովում սույն կարգի պահանջների կատարումը, արձանագրում է վիճակահանության արդյունքները, երաշխավորում վիճակահանության հրապարակայնությունը և օբյեկտիվությունը:

9. Հանձնաժողովը ձևավորվում է վիճակահանության անցկացման օրը:

10. Հանձնաժողովը բաղկացած է 5 անդամներից: Հանձնաժողովի նախագահը (մշտական հիմունքներով)՝ Ծրագրի գլխավոր իրավախորհրդատուն է, իսկ քարտուղարը՝ «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության նախագահի ներկայացուցիչը: Հանձնաժողովի մնացած 3 անդամներն ընտրվում են վիճակահանության անցկացման օրը՝ շահառուների կողմից, իրենց կազմից:

Վիճակահանության ընթացքն արձանագրվում է և կազմված արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

11. Հանձնաժողովի լիազորությունները դադարում և այն լուծարվում է վիճակահանության արդյունքներն արձանագրելուց հետո:

### **4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ**

12. Տվյալ խմբի շահառուները վիճակահանությանը մասնակցում են ազգանունների այբբենական հերթականությամբ:

13. Շահառուն դուրս բերելով վիճակատոմսը, այն հրապարակայնորեն բաց վիճակում ցուցադրում է վիճակահանությանը ներկա մասնակիցներին և հանձնաժողովի անդամներին, ովքեր գրանցում են արդյունքը: Վիճակահանությանը մասնակից շահառուն տեղում ստորագրում է վիճակահանությանը մասնակցելու մասին անհատական արձանագրությունը (հավելված 1), որը պարունակում է տվյալներ նրա կողմից վիճակահանությամբ ընտրած բնակարանի մասին, ինչպես նաև նշում է վիճակահանության կազմակերպման և անցկացման հետ կապված իր դիտողությունները և առաջարկությունները, եթե այդպիսիք կան: Անհատական արձանագրությունը հաստատվում է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության նախագահի կողմից և կցվում է հանձնաժողովի արձանագրությանը: Անհատական արձանագրության պատճենը շահառուի պահանջի դեպքում տրամադրվում է նրան:

14. Վիճակահանության կազմակերպման համար նախապատրաստվում են զամբյուղներ, որոնցում առկա վիճակատոմսերից յուրաքանչյուրը պարունակում է տեղեկատվություն բնակարանի մասին:

